

ՓՈՒԼՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԼԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի և Իտալիայի Հանրապետության Միլանի նահանգի իշխանությունները /այսուհետ՝ Կողմեր/՝

Հաշվի առնելով հայ և իտալացի ժողովուրդների միջև գոյություն ունեցող դարավոր պատմական, մշակութային և տնտեսական կապերը, մասնավորապես՝ Միլանի նահանգի հայկական համայնքի ակտիվ ներգրավվածությունը նահանգի տնտեսական, քաղաքական և հասարակական գործունեության մեջ,

Հիմնվելով փոխադարձ շահագրգռվածության, վստահության և փոխըմբռնման սկզբունքների վրա, նպատակ ունենալով առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային երկկողմանի կապերի հաստատման և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, երկու կողմերի տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների և կազմակերպությունների միջև շուկայական հարաբերություններ հաստատելու.

Համոզված լինելով, որ Կոտայքի մարզի և Միլանի նահանգի միջև նման համագործակցությունը կնպաստի հայ-իտալական բարեկամական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը,

Ստորագրում են սույն Հուշագիրը և համաձայնության են գալիս հետևյալի շուրջ.

ՀՈՂՎԵՐ 1

Կողմերը կզարգացնեն իրենց հարաբերությունները ընդհանուր շահեր ներկայացնող բոլոր բնագավառներում, շարունակաբար և հետևողականորեն կխորացնեն իրենց համագործակցությունը նաև առանձին պայմանագրերի և համաձայնագրերի միջոցով:

ՀՈՂՎԱԾ 2

Կողմերի միջև համագործակցությունը և փորձի փոխանակումը կիրականացվի հետևյալ ուղղություններով՝

ա/ առևտրական և տնտեսական կապերի զարգացում տեղեկատվության փոխանակման, համատեղ ձեռնարկությունների, առևտրային պալատների ստեղծման հնարավորությունների հետազոտմանն ակտիվորեն աջակցելու միջոցով

բ/ համատեղ ներդրումային ծրագրերի մշակում

գ/ մշակույթի և կրթության ոլորտներում շփումների զարգացում, ներառյալ՝ դպրոցների և բուհերի միջև փոխանակությունները

դ/ տուրիզմի, ազատ ժամանցի և սպորտի համապատասխան ծառայությունների և ենթակառույցների զարգացում

ե/ մարզերին վերապահված իրավասության սահմաններում շրջակա միջավայրի պահպանման բնագավառում փորձի փոխանակում

զ/ առողջապահության բնագավառում փորձի փոխանակում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վերականգնման և կանխարգելման հարցերին

է/ գյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում փորձի փոխանակում

ը/ տրանսպորտի և հաղորդակցության համակարգի /երթուղիներ, ճանապարհային հանգույցներ և այլն/ ուսումնասիրություն

թ/ տարբեր ոլորտների մասնագետների կատարելագործման բնագավառում փորձի փոխանակում

ՀՈՂՎԱԾ 3

Հոդված 2-ում նշված ուղղություններով կողմերը կհամագործակցեն ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության նախաձեռնության, ներառյալ՝ Եվրոռեգիոն ծրագրի շրջանակներում:

ՀՈՂՎԱԾ 4

Համատեղ գործողությունների բովանդակությունը հստակորեն մանրամասնելու նպատակով Կողմերն ստորագրում են աշխատանքային արձանագրություն:

Համագործակցության արդյունքները քննարկելու նպատակով Կողմերը կազմակերպում են հանդիպումներ՝ համաձայնեցնելով պատվիրակությունների կազմը:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը նպաստում են երկու մարզերի տնտեսության ոլորտում գործող կազմակերպությունների և անհատների միջև կապերի զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններին:

ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը միմյանց տրամադրում են համագործակցության զարգացմանն ուղղված անհրաժեշտ տեղեկատվություն ու հրապարակումներ:

ՀՈՂՎԱԾ 7

Համագործակցությունը ծավալվում է երկու պետություններում գործող օրենսդրական նորմերի համաձայն, Կողմերի իրավասության սահմաններում և պետական մարմինների հետ համաձայնեցնելով:

Սույն Հուշագրին առնչվող վերջնական որոշումները կայացնում են միմիայն պայմանավորվող Կողմերը:

ՀՈՂՎԱԾ 8

Սույն Հուշագրի կետերի մեկնաբանման և կատարման ընթացքում Կողմերի միջև ծագող հնարավոր տարաձայնությունները լուծվում են համատեղ խորհրդատվությունների միջոցով:

ՀՈՂՎԱԾ 9

Սույն Հուշագրով համագործակցության տարբեր ոլորտներում փոխադարձ պայմանավորվածությունների իրականացման նպատակով կարող են անկացվել երկկողմ բանակցություններ, ձևավորվել համատեղ աշխատանքային խմբեր:

ՀՈՂՎԱԾ 10

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 /հինգ/ տարի ժամկետով: Համաձայնագրի ժամկետի ավարտից հետո այն ինքնաբերաբար երկարացվում է յուրաքանչյուր 5 /հինգ/ տարին մեկ, մինչև կողմերից որևէ մեկը ժամկետի ավարտից առնվազն 3 /երեք/ ամիս առաջ չձանուցի համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Ստորագրված է _____ ք. Երևանում 2010թ. հունիսի __7__- ին երկու օրինակից, յուրաքանչյուրը երկու լեզվով՝ հայերեն և իտալերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:



ԿԱՎԱԼԵՆԿՈ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ



ԲՐՈՒՆՈ ԴԱՊԵՒ

ՄԻԼԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ